



ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ
ՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Արցախում հաշվառված քաղաքացիներին աջակցության միջոցառման և
աջակցության տրամադրման կարգի վերաբերյալ



ԻՐԱԿՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2020թ. նոյեմբերի 19-ին ուժի մեջ մտավ ՀՀ կառավարության 2020թ. նոյեմբերի 16-ի թիվ 1799-Լ Արցախում հաշվառված քաղաքացիներին աջակցության միջոցառումը հաստատելու մասին որոշումը: Իսկ 2020թ. նոյեմբերի 21-ին ուժի մեջ մտավ 2020թ. նոյեմբերի 18-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված Արցախում հաշվառված քաղաքացիներին աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին թիվ 1813-Լ որոշումը:

Չնայած որոշումներով սահմանվել է, որ դրանց նպատակն է միանվագ դրամական օգնության տրամադրման ձևով աջակցություն տրամադրել պատերազմի հետևանքով տեղահանված արցախցիներին, նույն որոշումներում սահմանված դրույթները չեն համապատասխանում սոցիալական պետության նպատակներին և սահմանված կարգի պայմաններում առաջացնում են տեխնիկական խնդիրներ և խոչընդոտներ շահառուների համար:

Միջոցառումը հաստատելու մասին թիվ 1799-Լ որոշումը սահմանվել է, որ աջակցություն է տրամադրվում Ադրբեյջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի քաղաքացիներին, որոնք ունեն Արցախի հաշվառում: Սոցիալական աջակցությունն Արցախի քաղաքացուն տրամադրվում է նաև այն դեպքում, եթե նա վերադարձել է Արցախ: Բացի այդ, միջոցառման այն շահառուին, որը չունի սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությունում գտնվող անշարժ գույք (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի), տրամադրվում է լրացուցիչ աջակցություն՝ 15.000 դրամի չափով:

Նույն որոշումը սահմանվում է նաև այն անձանց շրջանակը, ովքեր չեն կարող հանդիսանալ միջոցառման շահառու: Որոշման 3-րդ կետի համաձայն՝ Արցախի քաղաքացին, որն ունի Արցախի հաշվառում, չի կարող հանդիսանալ սույն միջոցառման շահառու, եթե՝

- 1) նրա համար Հայաստանի Հանրապետությունում հաշվարկվել է աշխատավարձ կամ դրան հավասարեցված այլ եկամուտ 2020 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած որևէ ժամանակահատվածում, կամ նույն ժամանակահատվածում նա Հայաստանի Հանրապետությունում հաշվառված է եղել որպես անհատ ձեռնարկատեր.
- 2) նրա անվամբ 2020 թվականի հոկտեմբեր ամսվա համար Արցախի պետական կամ համայնքային բյուջեից հաշվարկվել է աշխատավարձ կամ դրան հավասարեցված այլ եկամուտ.



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

3) նա հանդիսանում է 18-ից (18 տարին լրացել է մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը) մինչև 58 (58 տարին լրացել է 2020 թվականի նոյեմբերի 10-ից հետո) տարեկան արական սեռի անձ, բացառությամբ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից:

Այսպես,

- Սահմանվում է, որ դրամական աջակցություն չի կարող տրամադրվել այն անձանց, ում անվամբ ՀՀ-ում հաշվարկվել է աշխատավարձ կամ դրան հավասարեցված այլ եկամուտ 2020 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած որևէ ժամանակահատվածում:

Գտնում ենք, որ նման ժամկետային սահմանափակումը որևէ հիմնավորում չունի, քանի որ մարտական գործողություններն սկսվել են 2020թ սեպտեմբերի 27-ին, որոնց արդյունքում անձը կարող էր զրկված լինել իր եկամտից: Ըստ որոշման ընդհանուր տրամաբանության՝ տրամադրվող աջակցությունն ուղղված է հենց մարտական գործողությունների արդյունքում առաջացած սոցիալական խնդիրները մեղմելուն: Արդյունքում անձը, ով ՀՀ-ում ստացել է աշխատավարձ պատերազմից ամիսներ առաջ, սակայն պատերազմի արդյունքում ստիպված լքել է Արցախը և տեղափոխվել է ՀՀ, զրկվում է աջակցությունից: Ավելին, մեխանիկորեն զրկվում է նաև 15.000 ՀՀ դրամ աջակցություն ստանալու հնարավորությունից:

- Արցախի քաղաքացին, որն ունի Արցախի հաշվառում, չի կարող հանդիսանալ սույն միջոցառման շահառու, եթե վերջինիս անվամբ 2020 թվականի հոկտեմբեր ամսվա համար Արցախի պետական կամ համայնքային բյուջեից հաշվարկվել է աշխատավարձ կամ դրան հավասարեցված այլ եկամուտ: Գտնում ենք, որ ՀՀ կառավարությունը հաշվի չի առել այն հանգամանքը, որ շահառուի աշխատավարձի կամ դրան հավասարեցված եկամտի չափը կարող է ցածր լինել 68.000 ՀՀ դրամից, քանի որ Արցախում նվազագույն աշխատավարձի չափը կազմում է 50.000 ՀՀ դրամ: Այս դեպքում անձը զրկվում է իր աշխատավարձի և առաջարկվող 68.000 ՀՀ դրամի տարբերությունը ստանալու հնարավորությունից, ինչպես արվել է, օրինակ, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց դեպքում: Կրկին, անձը մեխանիկորեն զրկվում է նաև 15.000 ՀՀ դրամ աջակցություն ստանալու հնարավորությունից:

- Սահմանվում է, որ դրամական աջակցություն չի կարող տրամադրվել Արցախի արական սեռի այն քաղաքացուն, ով ծնվել է 1962 թվականի նոյեմբերի 10-ից (ներառյալ) մինչև 2002 թվականի սեպտեմբերի 27-ը (ներառյալ) և չունի 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն: Գտնում ենք, որ նշված դրույթը սեռով պայմանավորված խտրականության դրսևորում է, որը հնարավորություն չի տալիս 18-58 տարեկան արական սեռի այն քաղաքացիներին, ովքեր թեն չունեն 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն, սակայն, այնուամենայնիվ, պատերազմի օրերին առողջական խնդիրների պատճառով եղել են անաշխատունակ կամ մարտական գործողություններին մասնակցելու համար ոչ պիտանի, այդ թվում՝ բժշկական փաստաթղթերով հիմնավորված, ստանալ դրամական աջակցություն: Այս մասին որոշմամբ որևէ բացառություն չի սահմանվում: Ավելին, նման դրույթի սահմանումը պարզապես միտում ունի ազատել ՀՀ



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

սոցիալական ապահովության ծառայությանը լրացուցիչ վարչարարության իրականացումից և տվյալների ճշգրտումից: Միաժամանակ, նման սահմանափակման պարագայում արական սեռի քաղաքացիները գրկված են նաև 15.000 ՀՀ դրամ ստանալու հնարավորությունից:

- Առավել վատթար պայմաններ է նախատեսում թիվ 1813-Լ որոշման հավելվածի 5-րդ կետի 4-րդ ենթակետը, ըստ որի՝ դրամական աջակցության դիմումը մերժում է, եթե այն ներկայացնելու պահին շահառուն անչափահաս է, և ծնողը չի հանդիսանում Արցախում հաշվառված քաղաքացիների աջակցության միջոցառման շահառու (այսինքն՝ ընկնում է 16.11.2020թ. որոշման 3-րդ կետով սահմանված բացառություններից որևէ մեկի տակ): Այս պայմաններում որևէ աջակցությունից գրկվում են այն ընտանիքները և ընտանիքի անչափահաս զավակները, որոնց ծնողները հանդիսացել են 18-58 տարեկան արական սեռի ներկայացուցիչներ, այդ թվում՝ մեկ ծնող ունեցողները, կամ ում ծնողները կամ ծնողը ստացել է աշխատավարձ կամ դրան հավասարեցված եկամուտ, որի չափը նույնիսկ կարող է պակաս լինել 68.000 ՀՀ դրամից, ինչը ստեղծում է ծայրահեղ անբարենպաստ վիճակ Արցախից ՀՀ տեղափոխված, ժամանակավոր կացարաններում գտնվող, սեփականությունից գրկված ընտանիքների համար, անարդար է և չի համապատասխանում սոցիալական պետության նպատակներին:

- Թիվ 1813-Լ որոշման 5-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ դրամական աջակցության դիմումը մերժվում է, եթե 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ շահառուն ունի Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում կենսաթոշակ ստանալու իրավունք, և 2020 թվականի հոկտեմբեր ամսվա կենսաթոշակի չափը կազմում է 68000 դրամից ավելի:

Անհասկանալի է, թե արդյոք այն դեպքում, երբ քաղաքացին ստանում է 68.000 ՀՀ դրամի կամ դրանց ավելի կենսաթոշակ, սակայն ՀՀ-ում չունի որևէ անշարժ գույք, վերջինիս այնուամենայնիվ տրամադրվում է հավելյալ աջակցություն՝ նախատեսված 15.000 դրամի չափով:

Աջակցության տրամադրման կարգի խնդիրներ

Ըստ թիվ 1813-Լ որոշման՝ աջակցությունը տրամադրում (նշանակում և վճարում) է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումի հիման վրա, որի համար անհրաժեշտ է ունենալ ինտերնետային կապ, հետադարձ կապի համար նշել էլեկտրոնային փոստի հասցե ու բջջային հեռախոսահամար:

- Դիմումի ներկայացման նման կարգն ինքնին խնդրահարույց է Արցախում ինտերնետային կապի բացակայության, ինչպես նաև բջջային հեռախոսակապի գործունեության խափանումների պայմաններում: Ավելին, հաշվի առնելով որոշման շահառուների մեծամասնության անչափահաս և թոշակառու լինելու հանգամանքը, էլեկտրոնային փոստի հասցե նշելու պարտադիր պայմանն



ԻՐԱԿՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

առաջացնում է էական արհեստական խոչընդոտներ շահառուների դիմումների ներկայացման հարցում, հատկապես, երբ նույն էլեկտրոնային հասցեի կիրառման դեպքում դիմումները մերժվում են կամ հաստատում չի ստացվում:

- Թիվ 1813-Լ որոշման հավելվածի 5-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ դիմումը մերժվում է, եթե շահառուի համար առկա է հաստատված դիմում: Այսպես՝ միջոցառումը հաստատելու մասին որոշման համաձայն՝ միջոցառման շահառու հանդիսացող անչափահաս երեխաներին միանվագ դրամական օգնությունը և լրացուցիչ աջակցությունը տրամադրվում է ծնողին (օրինական ներկայացուցչին), եթե երեխայի ծնողը կամ ծնողներից մեկը հանդիսանում է ծրագրի շահառու: Մյուս կողմից՝ անչափահաս երեխաների դեպքում ծրագրում անհրաժեշտ է մուտք անել ծնողի տվյալները: Պրակտիկայում այն դեպքերում, երբ ծնողն արդեն մեկ անգամ իր անչափահաս երեխայի համար ծրագրում մուտքագրել է իր անձնագրային տվյալները (այդ թվում՝ անուն, ազգանուն), համակարգը հետագայում մերժում է վերջինիս կողմից այլ անչափահաս երեխաների կամ նույնիսկ իր անվամբ մուտքագրված դիմումի բավարարումը այն հիմքով, որ վերջինիս անվամբ արդեն իսկ առկա է հաստատված դիմում:

- Անչափահասների (երեխաների) տվյալները գրանցելիս հաճախ խնդիր է առաջանում ռեգիստրում տվյալների բացակայության պատճառով, որի պատճառով ներկայացված դիմումները մերժվում են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է վերանայել Արցախում հաշվառված քաղաքացիներին աջակցության միջոցառումը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումը, ինչպես նաև հստակեցնել և պարզեցնել Արցախում հաշվառված քաղաքացիներին աջակցության տրամադրման կարգը՝ նախատեսելով դիմումներ ներկայացնելու պարզեցված կարգ, չձանրաբեռնելով շահառուներին լրացուցիչ վարչարարությամբ և ձևական պահանջներով՝ ապահովելով նրանց առաջնային կարիքների բավարարումը:

Մասնավորապես՝

1. Թիվ 1799-Լ որոշմամբ առանձնացնել 68 000 ՀՀ դրամի և 15 000 ՀՀ դրամի աջակցության շահառու լինելու հնարավորությունը, այսինքն՝ չպայմանավորել 15 000 ՀՀ դրամ ստանալու իրավունքը 68 000 դրամի աջակցություն ստանալու իրավունք ունենալով:

2. Վերացնել թիվ 1799-Լ որոշման 3-րդ կետի առաջին ենթակետի պահանջը, քանի որ այն չի համապատասխանում ծրագրի նպատակին:

3. Հստակեցնել թիվ 1799-Լ որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետը՝ երաշխավորելու հավասար պայմաններ և առնվազն վճարելու նվազագույն աշխատավարձի և ստացված եկամտի տարբերությունը:



ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

4. Համալրել թիվ 1799-Լ որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետը՝ ընդլայնելով արական սեռի քաղաքացիների՝ աջակցության շահառու լինելու հիմքերը, այդ թվում առողջության հիմքով աշխատունակ կամ ռազմական գործողություններին մասնակցելու անհնարինության դեպքում:
5. Վերանայել թիվ 1813-Լ որոշման 5-րդ կետը, երաշխավորել հավասար պայմաններ և նախատեսել աջակցություն բոլոր երեխաների համար՝ անկախ ծնողի՝ ծրագրի շահառու լինելու հանգամանքից:
6. Ծրագրին դիմելու ընթացակարգը դարձնել մատչելի, այդ թվում՝ նախատեսել դիմումները հանձնելու հնարավորություն ոչ միայն էլեկտրոնային տարբերակով՝ հաշվի առնելով ծրագրի շահառուներ